

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

ք. Երևան

21.12.2012թ.

Ներկա էին խորհրդի 72 անդամներից 68-ը:

Նախագահ՝ Ս. Սարգսյան,

Քարտուղար՝ Դ. Հայրապետյան:

Օրակարգում.

1. Ռեկտորի հաշվետվությունը 2011/2012 ուսումնական տարվա Երևանի պետական համալսարանի գործունեության վերաբերյալ:

- 2011/2012 ուսումնական տարվա Երևանի պետական համալսարանի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների ներկայացում և կատարողականի հաստատում:
- 2010-2014թթ. Երևանի պետական համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրով 2011/2012 ուստարում նախատեսված գործողությունների ներկայացում և կատարողականի հաստատում:
- Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունների ներկայացում և կատարողականի հաստատում:

Ձեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան

2. Երևանի պետական համալսարանի 2012թ. եկամուտների և ծախսերի հաշվետվության գնահատում:

Ձեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան

3. Երևանի պետական համալսարանի 2012թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի հաստատում:

Ձեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան

4. Ընթացիկ հարցեր:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) – Խորհրդի 72 անդամներից ներկա են 68-ը: Քվորումն ապահովված է, և մենք կարող ենք սկսել: Օրակարգը ձեզ ծանուցված է: - Կա՞ն առաջարկություններ օրակարգի հարցերի վերաբերյալ: Եթե ոչ, առաջարկում եմ քվեարկությամբ հաստատել օրակարգը:

Կողմ՝ 68, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. Ռեկտորի հաշվետվությունը 2011/2012 ուսումնական տարվա Երևանի պետական համալսարանի գործունեության վերաբերյալ:

- 2011/2012 ուսումնական տարվա Երևանի պետական համալսարանի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների ներկայացում և կատարողականի հաստատում:
- 2010-2014թթ. Երևանի պետական համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրով 2011/2012 ուստարում նախատեսված գործողությունների ներկայացում և կատարողականի հաստատում:
- Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունների ներկայացում և կատարողականի հաստատում:

Ձեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) – Առաջարկում եմ խոսքը տրամադրել զեկուցողին և այս հարցի ներկայացման համար պարոն Սիմոնյանին տրամադրել 25 րոպե ժամանակ:

Ա. Սիմոնյան – Հայաստանի Հանրապետության մեծարգո Նախագահ, Խորհրդի հարգարժան անդամներ,

Հաշվետու ուսումնական տարում համալսարանում կրթական գործընթացը կազմակերպվել է՝ ելնելով ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված համապատասխան խնդիրներից ու նպատակներից: Մասնավորապես՝ շարունակվել են աշխատանքները ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի կազմակերպման ու պլանավորման կատարելագործման,

Եվրոպական չափորոշիչներին համահունչ որակի ներքին ապահովման համակարգի ստեղծման, բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում կրեդիտային համակարգի իրականացման, դասավանդման և ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացների բարելավման և մի շարք այլ ուղղություններով:

Համալսարանում զգալի աշխատանք է իրականացվել կրթության որակի բարելավման ասպարեզում, որը ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական հիմնական նպատակներից մեկն է:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են ԵՊՀ-ում որակի ապահովման ներքին մեխանիզմների ներդրման և որակի շարունակական բարելավման գործընթացները: Ստեղծվել են ԵՊՀ որակի ներքին ապահովման ինստիտուցիոնալ կառույցներ՝ ԵՊՀ որակի ապահովման կենտրոնը, ԵՊՀ գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովը, ֆակուլտետային գիտական խորհուրդների որակի ապահովման հանձնաժողովները (որտեղ ընդգրկված են նաև ուսանողների ներկայացուցիչները), որոնք կոչված են համալսարանում որակի ապահովման գործընթացներն արդյունավետ իրականացնելու: Այս ասպարեզում հիմնական խնդիրը պետք է լինի այդ կառուցվածքների փոխկապակցված աշխատանքը համալսարանի ղեկավարության և ֆակուլտետների, ամբիոնների, ինչպես նաև ուսանողական կառույցների հետ:

ԵՊՀ-ում կատարվում է «ԵՊՀ որակի ներքին ապահովման համակարգի զարգացում և ինքնագնահատման գործընթացի ներմուծում» նախագիծը, որի նպատակն է բարելավել և զարգացնել ԵՊՀ որակի ներքին ապահովման կառույցները և ընթացակարգերը, ներդնել բուհական ինքնագնահատման գործող համակարգ, որը կնպաստի որակի ներքին մշակույթի ձևավորմանը:

Ծրագրի իրագործման արդյունքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Հաշվետու ուստարում ԵՊՀ-ն մտել է պետական հավատարմագրման փուլ, որն իրականացվում է Եվրոպական կառույցների և փորձագետների օժանդակությամբ:
- Ինստիտուցիոնալ և ծրագրային պետական հավատարմագրման նպատակով հաշվետու շրջանում սկսվել և ընթացիկ ուստարում շարունակվել է ԵՊՀ ինքնագնահատման վերլուծական զեկույցի պատրաստման գործընթացը:

- Կրթության որակի շարունակական բարելավմանը նպաստող կարևոր գործոններից են դասավանդման արդյունավետության վերաբերյալ իրականացվող ուսանողական կիսամյակային հարցումները և ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության ամենամյա հարցումները: Ընդհանուր առմամբ, դրանք միտված են ուսումնական դասընթացների, դասավանդման, ուսումնառության և գնահատման կիրառվող մեթոդների, ամբողջական կրթական ծրագրերի և ուսումնական միջավայրի անընդհատ բարելավմանը և կատարելագործմանը: Հարցումների միջոցով նաև փորձ է արվել բացահայտելու կոռուպցիոն երևույթների տարածվածության աստիճանը դրանց վերացման ուղղությամբ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու համար:
- Բուհական կրթության որակի բարելավումը խթանող կարևոր գործոններից է նաև մասնագետների՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան պատրաստումը, ինչի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է բուհ-գործատու սերտ համագործակցությամբ: Նման համագործակցության լավագույն դրսևորում է արդեն 7-ամյա տարեգրություն ունեցող կրթական համագործակցությունը «Սինոփսիս-Արմենիա» ընկերության հետ:

Ուշագրավ է, որ առաջին շրջափուլի (բակալավրիատ-մագիստրատուրա-ասպիրանտուրա) արդյունքում երկու ասպիրանտ պաշտպանեցին թեկնածուական ատենախոսություն: Անշուշտ, այս համագործակցության հիմնական նպատակը բարձր որակավորման մասնագետների պատրաստումն է, ինչը փոխշահավետ է գործակցող կողմերի համար. համալսարանի որակյալ շրջանավարտն ապահովվում է աշխատանքով, ընկերությունն էլ համալրվում է պահանջված մասնագետով: Այս առումով համալսարանը փորձում է համագործակցել Հայաստանում գործող նմանատիպ այլ ընկերությունների հետ ևս:

Հաշվետու ուսումնական տարում ձեռնարկվել են ուսումնական գործընթացի բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված մի շարք միջոցառումներ:

- ՀՀ ԿԳ նախարարության «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգի պահանջների համաձայն՝ ԵՊՀ 50 լսարաններում տեղադրվել են

տեսախցիկներ՝ տեսագրելու ամփոփիչ ատեստավորման ողջ ընթացքը և ապահովելու բողոքարկումների գործընթացը:

- Արդեն բարի ավանդույթ է դարձել հանրակրթական դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար տարբեր առարկաների գծով օլիմպիադայի կազմակերպումը: Հաշվետու տարում այն անցկացվել է Երևանում, Գյումրիում, Իջևանում, Արարատում և Արմավիրում: Նախորդ տարիների համեմատ մեծացել է մասնակից դպրոցների աշխարհագրությունը և աշակերտ մասնակիցների թիվը. 157 դպրոցներից օլիմպիադային մասնակցել է 2409 աշակերտ:

2012/2013 ուստարում արձանագրվել է ԵՊՀ դիմորդների աննախադեպ աճ: Կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում համալսարանի բակալավրիատի դիմորդների բաժնեմասը կազմել է 33 %: ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում կազմել է 28,8 %:

Շարունակվել է ԵՊՀ դասախոսական կազմի երիտասարդացման գործընթացը, մասնավորապես, բարձր տարիքի դասախոսների ուսումնական բեռնվածության նվազեցման և դասավանդման գործընթացում երիտասարդ դասախոսների ներգրավման միջոցով: Հաշվետու տարում դասախոսական կազմը համալրվել է 30 նոր դասախոսներով, որոնցից 7-ը՝ ԵՊՀ ասպիրանտուրայից: 2011/2012 ուստարում շարունակվել են աշխատանքները հետբուհական լրացուցիչ կրթության երկու հիմնական ծրագրով՝ դասախոսների որակավորման բարձրացում և մասնագիտական վերապատրաստում:

Լրացուցիչ կրթության ոլորտում շեշտադրումն արվել է դասախոսներին միտված աշխատանքին: Հաշվետու տարվանից ԵՊՀ-ում մեկնարկել է պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման նոր՝ կրթագիտական ծրագիր, որին նախորդել է ծավալուն նախապատրաստական աշխատանք: Այն, որ ծրագիրը թե՛ բովանդակությամբ, թե՛ կառուցվածքով արդիական է ու գրավիչ, վկայում է դասախոսների ակտիվ մասնակցությունը. մեկ տարում ունկնդիրների ընդհանուր թիվը կազմել է 1642 մարդ: Անգլերենի դասընթացի 259 մասնակցից 63-ը ստացել է միջազգային հավաստագիր: Ընդառաջելով

դասախոսներին՝ կազմակերպվել է նաև ամառային դպրոց՝ «Հասարակագիտական հետազոտության տեղեկատվական աղբյուրներ» թեմայով՝ օգտագործելով ԵՊՀ-ում գործող հետազոտական այլ կենտրոնների ներուժը: Հարցումները վկայում են, որ դասախոսների կատարելագործման ծրագրի մեկ տարվա արդյունքները գոհացուցիչ են ու խոստումնալից, և նման տեմպերի դեպքում 1-ին շրջափուլի ավարտին կարելի է սպասել դասախոսական կազմի որակական ցուցանիշների շոշափելի աճ:

Համալսարանի գործունեության հաջողությունը մեծապես պայմանավորված է բոլոր ոլորտներում տեղեկատվական արդի տեխնոլոգիաների ներդրման և գործարկման արդյունավետությամբ: Այս առումով հաշվետու ժամանակահատվածը ևս աչքի է ընկել ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի լայնածավալ գործունեությամբ: Շարունակվել են աշխատանքները նոր կրթական տեխնոլոգիաների օգտագործման և մշակման, SS բնագավառում մագիստրոսական կրթական ծրագրերի և առանձին դասընթացների իրականացման, գիտահետազոտական աշխատանքների կատարման, համալսարանական կրթության կառավարման տեղեկատվական համակարգերի մշակման և ներդրման ուղղությամբ: Հաստատվել է ևս մեկ ԱՄՆ արտոնագիր հիշողության սարքերի կառուցվածքային մոդելի վերաբերյալ: Թեստավորման ուղղությամբ կատարված հետազոտությունների արդյունքները ամփոփվել են երեք նոր հայտերի ձևով և ներկայացվել ԱՄՆ արտոնագրի: 2011/2012 ուստարում Երևանի պետական համալսարանում գիտական աշխատանքներն ընթացել են երեք հիմնական ուղղություններով՝ պետական բազային («Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում»), թեմատիկ և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում: Հետազոտական առումով պետք է առանձնացնել ԵՊՀ կազմում գործող Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գործունեությունը: ԵՊՀ նոր ձեռքբերումներից էր բազային ծրագրերի ոլորտում 3 նոր հետազոտական լաբորատորիաների ստեղծումը:

Երևանի պետական համալսարանում 2011թ. մարտից գործում է 34 դրամաշնորհային ծրագիր: Ընդհանուր առմամբ, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված դրամաշնորհային ծրագրերի մրցութային շեմը հաղթահարած ծրագրերի 24 %-ից ավելին բաժին է ընկնում Երևանի պետական համալսարանին: Աշխատանքները շարունակվել են նաև 2005 թվականից գործող

պետական բազային ֆինանսավորմամբ գիտահետազոտական լաբորատորիաներում, որոնց թիվն այսօր հասնում է երկուսուկես տասնյակի, և 9 կենտրոններում: Երևանի պետական համալսարանը, բացի տեղական պետական դրամաշնորհային ծրագրերից, մասնակից է նաև տարբեր միջազգային դրամաշնորհային ծրագրերի:

Անցած ուսումնական տարին հարուստ էր նաև տարբեր գիտական միջոցառումներով: Դրանցից պետք է առանձնացնել տարբեր բնագավառների վերաբերող մի շարք գիտաժողովներ:

ԵՊՀ-ն միշտ կարևորել է երիտասարդ գիտական կադրային ներուժի կայացման խնդիրը: Ներկայումս ԵՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգի ասպիրանտների ընդհանուր թիվը 311 է (առանց օտարերկրյա քաղաքացիների): Նշենք, որ վերջին տարիներին 28 տարբեր մասնագիտությունների գծով թե՛ դոկտորական, թե՛ թեկնածուական ատենախոսությունների թիվը շարունակական աճ է արձանագրել: ԵՊՀ-ում գործող 11 մասնագիտական խորհուրդներում 2011/2012 ուստարվա ընթացքում պաշտպանվել է 12 դոկտորական և 130 թեկնածուական ատենախոսություն:

Դրական տեղաշարժ է կատարվել գրադարանային գործունեության գրեթե բոլոր ոլորտներում՝ կապված տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման, աշխատանքային գործընթացների ավտոմատացման, գրականության համալրման, մշակման, մուտքագրման, հաշվառման ու պահպանման հետ: Գրադարանում բացվել է վիրտուալ ընթերցասրահ, որտեղ օգտվողին հասանելի են ավելի քան 700.000 ատենախոսությունների և սեղմագրերի էլեկտրոնային տարբերակներ: Համալսարանի ողջ տարածքից հասանելի են դարձել ավելի քան 10.000 ամսագրեր՝ շուրջ 10 միլիոն գիտական հոդվածներով, և 60.000 գրքերի էլեկտրոնային տարբերակներ:

Հաշվետու տարին նշանակալից էր հատկապես հրատարակչության համար: 2012թ. ապրիլին կայացավ Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյակին նվիրված՝ ԵՊՀ հրատարակչության կողմից լույս ընծայված գրքերի շնորհանդեսը: Հրատարակչության հաջողություններից պետք է առանձնացնել հաշվետու տարում ականավոր հայագետ Նիկ. Ադոնցի երկերի հինգ հատորյակի հրատարակման ավարտը: Ադոնցի երկերի հրատարակությունը կարևոր ներդրում է ոչ միայն հայ պատմագիտության, այլև համաշխարհային գիտական ասպարեզում: ԵՊՀ ֆինանսավորմամբ լույս են տեսնում

և՛ հումանիտար, և՛ բնական գիտությունների գծով դասագրքեր, ձեռնարկներ: Ուսումնական գրականության պակասն աստիճանաբար նվազում է: Երևանի պետական համալսարանը միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 50 երկրների 200 համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ: Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ստորագրվել է ևս 11 պայմանագիր: Ինչպես և նախորդ տարիներին, 2011/2012 ուստարում Երևանի պետական համալսարանն ակտիվորեն մասնակցել է տարբեր միջազգային գիտաժողովների, սեմինարների և քննարկումների կազմակերպմանը: Միևնույն ժամանակ, ԵՊՀ միջազգային համագործակցության վարչությունն աջակցել է ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունների և ՀՀ-ում հավատարմագրված դեսպանությունների կողմից տարբեր գիտակրթական միջոցառումների, սեմինարների, կրթական ծրագրերի և տեղեկատվական ցուցահանդեսների կազմակերպմանը: Վերջին 5 տարիների ընթացքում Երևանի պետական համալսարանը ակտիվորեն մասնակցել է ՏԵՄՊՈՒՍ-ի շրջանակներում նախագծերի մշակմանն ու իրականացմանը: 2011/2012 ուստարում հաջողությամբ շարունակվել են ՏԵՄՊՈՒՍ, Էրազմուս Մունդուս դրամաշնորհային ծրագրերը: 2011/2012 ուսումնական տարում ընդհանուր առմամբ իրականացվել է 555 անձ/գործուղում: 2011/2012 ուսումնական տարում գործուղվել են 325 մասնագետ, 185 ուսանող և ասպիրանտ: Համալսարանի վարչական կազմից արտասահման է գործուղվել 45 անձ: 2011/2012 ուստարում ԵՊՀ ֆակուլտետներում սովորել են 491 օտարերկրյա ուսանող և ասպիրանտ: Մենք, իհարկե, կարող ենք ընդունել ավելի շատ թվով արտասահմանցի ուսանողներ, և մեր ներուժը դա թույլ է տալիս, սակայն առկա է մեկ խոչընդոտ՝ հանրակացարանի բացակայությունը: Այս խնդիրը բազմիցս քննարկվել է Գիտական խորհրդում և ԿԳ նախարարությունում: Կան լուծման որոշակի տարբերակներ, որոնք հետագայում կներկայացվեն: 2012թ. ընթացքում «Գալուստ Կյուլպենկյան» հաստատության կողմից հատուցվել է համալսարանի 37 երիտասարդ գիտնականի կարճաժամկետ և երկարաժամկետ արտասահմանյան գործուղումների ծախսը:

ԵՊՀ հասարակայնության հետ կապերի վարչությունն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

1. համագործակցություն տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների հետ, միջոցառումների լուսաբանում,
2. «Երևանի համալսարան» պաշտոնաթերթի հրատարակում,
3. հանրային կապերի ոլորտին վերաբերող նյութերի տպագրություն,
4. մեթոդական աշխատանքների իրականացում,
5. ինտերնետային ռեսուրսների զարգացում, համացանցային տիրույթում ԵՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածում, ֆոտո և տեսանյութերի ստեղծում և արխիվացում,
6. պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների և տարբեր կառույցների հետ աշխատանքներ:

Պարբերաբար թարմացվել է ԵՊՀ պաշտոնական ինտերնետային կայքը՝ www.yasu.am հասցեով, կայքում օպերատիվորեն կազմակերպվել է տեղեկատվության տեղադրումը: 2012 թվականի օգոստոսին Վեբոմետրիքսը (Webometrics Ranking of World Unisvesuties) հրապարակել է բուհական համաշխարհային վարկանշային աղյուսակը:

ԵՊՀ-ի վարկանիշը կազմում է 2051, ըստ որի՝ ԵՊՀ-ն գլխավորում է ՀՀ բուհերի ցանկը: Ինչպես տարեսկզբին, այնպես էլ ներկայումս ԵՊՀ-ն մտնում է աշխարհի համալսարանների լավագույն 10 տոկոսի մեջ: Ռեյտինգավորման համակարգի չորս բաղադրիչներից երկուսը վերաբերում են կայքի ծավալներին, որոնց ուղղությամբ արձանագրվել է զգալի առաջընթաց:

ԵՊՀ համակարգչային ցանցը Հայաստանի բուհական համակարգում զբաղեցնում է առաջատար դիրք և առանձնանում է թե՛ իր չափերով և թե՛ տեխնիկական հագեցվածությամբ և համապատասխան որակական բնութագրիչներով: Համալսարանի ինտերնետ կապի թողունակությունը եղել է միջինը 18 Mb/s: Ինտերնետ կապի տրամադրման քարտային համակարգից փորձնական անցում է կատարվել էլեկտրոնային փոստի հասցեով ինտերնետից օգտվելու գործընթացին օրական չափաբաժինը միջինը 20 անգամ բարձրացնելու պայմաններում: Առկա արդյունքները հնարավորություն են ընձեռում 2013 թվականին անցնել գրեթե անսահմանափակ ծավալով ինտերնետի օգտագործմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ուսանողական խորհուրդը շարունակել է իր գործունեությունը՝ պաշտպանելով ուսանողների շահերն ու իրավունքները, ապահովելով ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, մասնակցելով ուսումնական գործընթացի և այլ աշխատանքների կազմակերպմանը և աջակցելով ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը: Ուսանողական աշխատանքներում էական կարևորություն ունի ուսանողներին գործող կրթական համակարգի, նրանց իրավունքների և պարտականությունների և ներհամալսարանական կյանքի մասին իրազեկելու խնդիրը: Աշխատանքներ են իրականացվել ուսանողությանը կրեդիտային համակարգին ծանոթացնելու և այն ավելի ընկալելի դարձնելու ուղղությամբ: Հետևողական աշխատանքներ են իրականացվել ուսանողների սոցիալական վիճակը բարելավելու ուղղությամբ, մասնավորապես՝ նախորդ տարվա պես Ուսանողական աջակցությամբ շուրջ 1000 ուսանողի տրվել են ուսման վարձի զեղչեր, կրթաթոշակներ, ինչպես նաև ցուցաբերվել է այլ աջակցություն (ամառային հանգիստ և այլն): 2011թ. նոյեմբերի 17 ին՝ ուսանողության միջազգային օրը, կազմակերպվել է «Ուսանող-2011» մրցանակաբաշխությունը, որի ընթացքում ԵՊՀ մշակույթի կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել է համերգ, և հասարակական ակտիվություն դրսևորած և ԵՊՀ պատիվը բարձր պահած ուսանողները պարգևատրվել են ԵՊՀ Ուսանողական մեդալներով: Այդ օրը իրականացվել է նաև «Ուսանողական ռեկտորատ» ծրագիրը. հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված ուսանողները մեկ օրով «զբաղեցրին» ռեկտորի, պրոռեկտորների և դեկանների պաշտոնները և ներկայացրին իրենց առաջարկություններն ու մոտեցումները համալսարանական մի շարք խնդիր- ների վերաբերյալ:

Աշխատանքներ են իրականացվել նաև ուսանողական միջազգային համագործակցության ուղղությամբ: Ուսանողական խորհրդի օժանդակությամբ մի շարք ուսանողներ մեկնել են արտերկիր (Ռուսաստան, Վրաստան, Ղազախստան, Լեհաստան և այլն)՝ մասնակցելու գիտաժողովների, ֆորումների, ինտելեկտուալ խաղերի, մրցումների և այլն: Ակտիվ են եղել Ուսանողական աշխատանքները ուսանողների հայրենասիրական դաստիարակության աշխատանքների ուղղությամբ: Կազմակերպվել են տարբեր արշավներ, իրականացվել է ավանդական ծառատունկ ԼՂՀ Քաջաթաղի շրջանի համալսարանական պուրակում և մի շարք այլ

միջոցառումներ: Աշխատանքներ են ծավալվել նաև ՀՀ տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում: Ուսանողական խորհուրդը ակտիվորեն համագործակցել է նաև ՀՀ կրթության և գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի, սփյուռքի նախարարությունների, ՀՀ Ազգային ժողովի կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի հանձնաժողովի, Երևանի քաղաքապետարանի հետ: ՈՒԳԸ-ի կազմակերպած գիտաժողովների ընթացքում հնչել է շուրջ 700 գիտական զեկուցում: Զգալի աշխատանք է կատարվել միջազգային համագործակցության ընդլայնման և ԵՊՀ ուսանողներին միջազգային գիտաժողովներին մասնակից դարձնելու ուղղությամբ: 2011/2012 ուստարում ՈՒԳԸ-ն ծավալել է բեղուն հրատարակչական գործունեություն: Տպագրվել են գիտական հոդվածների 3 ժողովածու, գիտական 124 հոդված, զեկուցումների թեզիսների 1 ժողովածու:

Հաշվետու ուստարում ԵՊՀ մշակույթի կենտրոնը շարունակել է իրականացնել իր առջև դրված խնդիրները, որոնք են՝ համակարգել և գեղարվեստական բարձր չափանիշներով անցկացնել ԵՊՀ շրջանակներում և նրանից դուրս կազմակերպվող մշակութային միջոցառումները, ինչպես նաև համապատասխան աշխատանքներ իրականացնել համալսարանական ուսանողության մշակութային դաստիարակության ուղղությամբ:

Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը, շարունակելով աշխատանքային շուկայում ԵՊՀ ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, երիտասարդ մասնագետների զբաղվածության խնդիրների լուծման աջակցմանը, ինչպես նաև համալսարան-ձեռնարկություն կապի հաստատմանը նպաստող գործունեությունը: Հաշվետու ժամանակահատվածում համալսարանում որոշակի աշխատանքներ են իրականացվել սոցիալական քաղաքականության ուղղությամբ: ԵՊՀ վարչակազմը և արհեստակցական կազմակերպությունն առավել ուշադրություն են դարձրել համալսարանի աշխատակիցների հանգստի, առողջության պահպանման, սոցիալական այլևայլ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը: Այդ նպատակով արհեստակցական կազմակերպությունը սեփական միջոցներից, որպես օգնություն, համալսարանի 525 աշխատակցի, առանձին դեպքերում նաև սոցիալապես

խիստ անապահով և հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողների հատկացրել է 20.125.000 (քսան միլիոն հարյուր քսանհինգ հազար) դրամ:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի համար հաշվետու ժամանակաշրջանը եղել է զարգացման ռազմավարական ծրագրի շրջանակներում իրականացվող կրթական բարեփոխումների, կրթության որակի ապահովման և վերահսկման, ինքնավերլուծության, ենթակառուցվածքների աշխատանքների կատարելագործման տարի: Վերանայվել և վերահաստատվել են կրթական ծրագրերը: Հեռակա ուսուցման բաժնի շրջանավարտների մեծ մասը, հաջողությամբ համատեղելով ուսումը աշխատանքի հետ, բարձրագույն կրթություն ստանալով, ապահովեցին իրենց մրցունակությունը աշխատատեղերում:

Այժմ հպանցիկ անդրադառնամ ռազմավարական ծրագրի կատարողականին:

Ներդրվել է որակի ներքին հավաստման համակարգ, զարգացվել է հարատև ուսումնառության համակարգը, սկսված է գործընթացը որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան դասախոսական կազմի համալրման և բարելավման ուղղությամբ: Որոշակի աշխատանքներ են տարվել ԵՊՀ-ում իրենց ուսումնառությունից և օժանդակ ուսանողական ծառայություններից ուսանողների բավարարվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Նախատեսված էր համապատասխանեցնել Համալսարանի ընդունելության կառուցվածքը և չափաքանակները աշխատաշուկայի և դիմորդների համադրված կարիքներին: Այստեղ դեռ խնդիրները շատ են, չէի ասի, թե արդյունքները գոհացուցիչ են, բայց խնդիրը պարզ է և մենք հստակ գիտենք, թե ինչ ուղղությամբ պետք է շարժվել: Նախատեսվում էր մեծացնել օտարերկրյա ուսանողների համակազմը Համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում, սակայն սա ինչպես նշեցի կապված է հանրակացարանի խնդրի հետ: Փորձել ենք ներդաշնակեցնել ֆինանսական պլանավորումը Համալսարանի ռազմավարական նպատակներին և խնդիրներին: Նախատեսված էր նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը, նպաստել համալսարանում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի հետագա զարգացմանը, որին միտված է եղել ԵՊՀ-ում հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողովի ստեղծումը և համապատասխան ծրագիրը և որի կատարողականը տրված է առանձին իմ զեկուցման տեքստի տպագրված տարբերակում:

Ամփոփելով Երևանի պետական համալսարանի 2011/2012 ուսումնական տարվա գործունեությունը՝ վերստին նշենք, որ այն կազմակերպվել և իրականացվել է ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանին համապատասխան և բոլոր ուղղություններով միտված է եղել մայր կրթօջախի զարգացմանը, ներպետական և միջազգային գիտակրթական ասպարեզում նրա դերի և հեղինակության բարձրացմանը: Ձեռքբերումները և հաջողություններն զգալի են բոլոր բնագավառներում: Այդուհանդերձ, առկա են նաև թերացումներ և բացթողումներ, որոնք անհրաժեշտ է շտկել, վերացնել: Յուրաքանչյուր համալսարանական՝ ուսանող թե դասախոս, գիտաշխատող թե սպասարկող, պետք է առաջնորդվի այն գիտակցումով, որ գործի հանդեպ իր վերաբերմունքից են կախված մայր համալսարանի հաջողությունները, առաջընթացը, վարկանիշը: Մեզնից յուրաքանչյուրի խնդիրն է ոչ միայն ձգտել նոր հաջողության, այլև փորձել այդ ճանապարհին վերացնել բացերն ու խոչընդոտները: Սա նաև ընդհանուր նպատակի՝ մայր համալսարանի առաքելությունը պատվով իրագործելու կարևորություն ունի:

Կատարելով գիտական խորհրդի ցանկությունը, կցանկանամ ևս մեկ անգամ ուշադրություն հրավիրել Կրթության մասին օրենքի այն կետին, որը նախատեսում է ԵՊՀ հատուկ կարգավիճակի հստակեցումը ՀՀ Կառավարության կողմից, որը առայժմ մնում է չիրականացված: Մի խնդրանք ևս գիտական խորհրդի կողմից, մենք մեծ ցանկություն ունենք առաջիկա հինգ տարիների ընթացքում տեսնել բարձրագույն կրթությանն ուղղված միջոցների ավելացում:

Վերջում, մեծարգո պարոն Նախագահ, բոլոր համալսարանականների անունից ուզում եմ արտահայտել մեր գոհունակությունը այն փաստի առթիվ, որ ՀՀ-ն ձեզ նորից առաջադրել է երկրի նախագահի պաշտոնում ընտրվելու համար, ուզում եմ հավաստիացնել, որ Երևանի պետական համալսարանը Ձեզ հետ է և դաշնակից է:

Շնորհակալություն ուշադրության համար:

Ջեկուցումից հետո հայտարարվեց հարցերի գրանցում:

Ջեկուցողին հարցեր չեղան:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) – Եթե հարցեր չկան, ես առաջարկում եմ քվեարկության դնել համապատասխան որոշման նախագիծը: Ո՛վքեր են կողմ.

1. Հավանություն տալ 2011/2012 ուսումնական տարվա ընթացքում Երևանի պետական համալսարանի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
2. Հավանություն տալ 2010-2014թթ. Երևանի պետական համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրով 2011/2012 ուստարում նախատեսված գործողությունների կատարման վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
3. Հավանություն տալ Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունների կատարման վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
4. Երևանի պետական համալսարանի 2011/2012 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

Կողմ՝ 68, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) – Առաջարկում եմ անցնել օրակարգի մյուս հարցին և եթե դեմ չեք, զեկուցելու համար միացնենք օրակարգի 2-րդ և 3-րդ հարցերը և ապա առանձին կքվեարկենք որոշման նախագծերը:

1. Երևանի պետական համալսարանի 2012 թ. եկամուտների և ծախսերի հաշվետվության գնահատում:
2. Երևանի պետական համալսարանի 2013թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի հաստատում:

Զեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Արամ Միմոնյան

Ա. Միմոնյան – Սկզբում ներկայացնեմ Երևանի պետական համալսարանի 2012թ. հունվար-նոյեմբեր ամիսների եկամուտների և ծախսերի կատարողականը: Ամբողջ տարվա կատարողականը կներկայացվի հաջորդ տարվա կեսերին: 2012թ.-ի տասնմեկ ամսվա ընթացքում նախահաշվի եկամուտները հավաքագրվել են պլանային ցուցանիշների նկատմամբ 89.3%-ով: Նախորդ տարի նույն ժամանակահատվածում հավաքագրվել էր 1%-ով ցածր: Եկամուտների 62%-ը կազմող վճարովի ուսուցման ծառայությունները դեկտեմբերի 1-ի դրությամբ կատարվել են 90%-ով: Հաշվի առնելով այս կիսամյակի դեռ չվճարված գումարները կարելի է ասել, որ նախատեսված պլանային ցուցանիշը կկատարվի 100%-ով: Միջին ուսման վարձը կազմել է 374.8

հազար դրամ: Վերջին չորս ուսումնական տարիների ընթացքում բակալավրիատի առկա ուսուցման վճարովի համակարգի ուսման վարձավճարները չեն փոփոխվել: Պետական բյուջեից ֆինանսավորումները ստացվում են ըստ սահմանված ժամանակացույցի՝ մեկ ուսանողի միջին ուսումնական վարձի չափը պետական ֆինանսավորմամբ կազմել է 340 հազար դրամ: Պետական ֆինանսավորման միջին ուսումնական վարձը վերջին երեք տարիների ընթացքում բարձրացել է մեկ հարյուր հազար դրամի չափով՝ մեկ ուսանողի հաշվարկով: Այն պայմանավորված է նրանով, որ կրճատվել են պետական պատվերի տեղերը, սակայն ֆինանսավորումը չի պակասել: Գործառնական այլ եկամուտների ցուցանիշը կազմել է 85%: Ոչ գործառնական եկամուտները կատարվել են 88%-ով: Ծախսերը կատարվել են 87.3%-ով: Ծախսերը նախատեսված ցուցանիշների նկատմամբ գերակատարվել են երեք հոդվածներով: Դրանք են անդամավճարների ծախսերը, հիմնադրամների հետ համագործակցության ծախսերը և հիմնանորոգման ծախսերը, որն ուղղորդվել է թիվ 7 մասնաշենքի հիմնանորոգմանը: ԵՊՀ-ում աշխատակիցների թիվը 2012թվականի տասնմեկ ամիսների ընթացքում կազմել 3073 մարդ՝ այդ թվում համատեղությամբ շուրջ 500 մարդ: Մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձը կազմել է 120 հազար դրամ: Բոլոր վարչական ստորաբաժանումները և ֆակուլտետները տարվա ընթացքում ակտիվորեն հետևել են իրենց կատարողականներին և չոգտագործված մնացորդները օգտագործվել են դեկտեմբեր ամսվա ընթացքում:

Երևանի պետական համալսարանի 2013թ.-ի եկամուտների և ծախսերի նախահաշվի եկամուտները և ծախսերը հավասարակշռված են: Այն կազմում է 8761 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 14.4%-ով: Ավելացման հիմնական աղբյուրներն են վճարովի ուսուցման ծառայություններից ստացվող եկամուտները 713 մլն դրամ կամ 15%-ով, գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերով ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման մասով 438 մլն. դրամով կամ 58%-ով աճ: Պետք է նշել, որ 2007 թ.-ի համեմատ ԵՊՀ նախահաշիվը եկամուտների գծով ավելացել է 73%-ով, որից վճարովի ուսուցման եկամուտները ավելացել են 68%-ով, գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերը շուրջ երկու անգամ: Այս տարվա գիտական ծրագրերը կազմում են մեր նախահաշվի 15%-ը, անցած տարի եղել է 12%: Մենք մեր առջև խնդիր ենք դրել

առաջիկա 5 տարիների ընթացքում այս մասնաբաժինը հասցնել 20%-ի: Դրամաշնորհային ծրագրերի եկամուտներն ավելացել են շուրջ 2,5 անգամ: 2013թ.-ի նախահաշիվը կազմելիս հիմնական շեշտը դրվել է աշխատակիցների աշխատավարձի բարձրացման վրա, ինչի պատճառով աշխատավարձի գծով ծախսերը ավելացել են 1822 մլն. դրամով, որի մեջ է մտնում նաև 2012թ.-ին առանձին տողով տրվող գործատուի կողմից վճարվող սոցիալական ապահովության վճարները, որոնք կազմում են 675 մլն. դրամ: Այսպիսով կարելի է ասել, որ 2013թ.-ի ակնկալվող եկամուտների աճն ամբողջությամբ ուղղվել է աշխատավարձի բարձրացմանը, որը կատարվել է հետևյալ կերպ.

- պրոֆեսորադասախոսական անձնակազմ – առձեռն վճարման աշխատավարձի բարձրացում 17-20%,
- վարչական, սպասարկող, ուսումնաօժանդակ և այլ անձնակազմ – առձեռն վճարման աշխատավարձի բարձրացում 15%-ով:

Բացի աշխատավարձերի բարձրացումներից նախատեսված է նաև աշխատավարձի գծով հետևյալ ծախսերը.

- տարբերակված հավելավճար պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ առաջին կարգ – 30 հազար դրամ, երկրորդ կարգ – 20 հազար դրամ, երրորդ կարգ – 10 հազար դրամ հաշվարկով, որի տարեկան ծախսը կազմում է 240 մլն. դրամ:
- հավելավճարներ պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ, վարչական անձնակազմին հետակա ուսուցման եկամուտների հաշվին: Այս ֆոնդը գոյանում է առանձին ըստ ֆակուլտետների: յուրաքանչյուր ֆակուլտետի համար հեռակա ուսուցման գծով հաշվարկվում են եկամուտները՝ ըստ ուսանողների թվի, այնուհետև պակասեցվում են ուսման վարձերի զեղչերի գումարը 5%-ի չափով, որից հետո ստացված թվից 20%-ի չափով բաշխվում է ֆակուլտետներին և ֆակուլտետի ղեկավարությունը ինքն է որոշում հավելավճարի չափը ֆակուլտետի աշխատակիցներին այն պայմանով, որ հավելավճարի չափը չգերազանցի հիմնական աշխատավարձը: Վարչական աշխատակազմի հավելավճարը կազմում է 3,5% ընդհանուր հեռակա ուսուցման

վարձավճարի թվից: Հավելավճարների գումարը 2013թ.-ին կազմում է 370 մլն. դրամ:

- ժամավճարային աշխատավարձը պրոֆեսորադասախոսական կազմին կազմում է 130 մլն. դրամ,
- խրախուսման և ֆինանսական աջակցության ծախսերը տարեկան 15 մլն. դրամ և ավանդույթ դարձած տարեվերջյան պարգևատրումները ԵՊՀ հիմնական բոլոր աշխատակիցներին՝ 320 մլն. դրամ:

Հաշվի առնելով, որ աշխատավարձի գծով ծախսերը կազմակերպության համար պարտադիր ծախսեր են և կազմում են ընդհանուր նախահաշվի 73%-ը, իսկ 2012թ.-ին կազմել է 68%, ապա բյուջեն գնահատվում է ոհսկային: Ռիսկերի կառավարման և մեղմացման համար նախատեսվել են որոշակի քայլեր, որոնք ներկայացվել են նախահաշվի նախագշի մեջ:

Բարձրագույն կրթության ծրագրով պետական բյուջեից ֆինանսավորումն արդեն 4-րդ ուսումնական տարում պահպանվում է նույնական՝ այն դեպքում, երբ պետական պատվերով ուսանողների թիվը կրճատվել է 1452-ով: 2013թ.-ին պետական ֆինանսավորմամբ մեկ ուսանողի միջին ուսման վարձը կազմելու է 395 հազար դրամ:

Շնորհակալություն:

Ձեկուցումից հետո հայտարարվեց հարցերի և առաջարկությունների գրանցում:

Ձեկուցողին հարցեր չեղան:

Հարցերի և առաջարկությունների համար գրանցվեցին Ս. Հարությունյանը, Ռ. Ավագյանը և Վ. Դումանյանը:

Ս. Հարությունյան – Պարոն Սիմոնյան, Դուք նշեցիք, որ գիտության ֆինանսավորման ոլորտում ունենալու եք 50% աճ, ընդ որում դրամաշնորհային և բազային ծրագրերում մոտավորապես 40% աճ է նախատեսվում, գիտական աստիճանների համար հավելավճարներում մոտավորապես 2,5 անգամ աճ, գիտական գործուղումների համար 3,5 անգամ ավել, քան 2012 թվականին: Դուք գիտեք, որ այս տարի մրցույթային ծրագրերի նոր ցիկլ է սկսվում և դեռ հայտնի չէ, թե ովքեր են հաղթելու մրցույթներում: Ինչպես ե՞ք Դուք նման համարձակ կանխատեսումներ անում:

Մեր գիտական գործուղումների համար ըդամենը նախատեսված է 34 մլն. դրամ՝ չհաշված ակադեմիան, իսկ դուք միայն 37 մլն. նախատեսել եք համալսարանում:

Ա. Սիմոնյան – Պարոն Հարությունյան, մենք սովորաբար այս թվերի մեջ շատ զգույշ ենք լինում, մենք կանխատեսում ենք, որ այդ ավելացումները կարող են ավելի շատ լինել: Ինչ վերաբերում է գիտական գործուղումներին, մենք հատկացնելու ենք նաև մեր միջոցներից: Մենք միայն անցած տարում շուրջ 500 դասախոս և 200 ուսանող ենք գործուղել գիտակրթական նպատակներով:

Ռ. Ավագյան – Մենք միշտ հաշվի ենք առնում մեր նախորդ ձեռքբերումները և իրականացնում պլանավորում: Ես կցանկանայի ասել, որ նախորդ անգամ ֆիզիկայի և ռադիոֆիզիկայի ֆակուլտետները ստացան պետական ֆինանսավորման 19 դրամաշնորհներից 9-ը: Մենք ենթադրում ենք, որ այս անգամ ևս համալսարանը արժանի կերպով կստանան այդ չափով ֆինանսավորում:

Վ. Դումանյան – Պարոն Սիմոնյան, ցանկանում եմ հարցնել, որ մենք բյուջեում հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հետ համագործակցության ծրագրերով նախատեսում ենք 115 մլն. դրամ և դա մեծ գումար է ասենք այլ տողերի հետ համեմատության հետ: Ինչո՞վ է պայմանավորված այս գումարի չափը: Ես կցանկանայի նաև իմանալ, Դուք առանձին կանդրադառնա՞ք Գիտական խորհրդի մեր որոշման հնչեցմանը:

Ա. Սիմոնյան – Ես որոշման մասին նշեցի և մեջբերեցի օրենքի համապատասխան կետը: Ինչ վերաբերում է համագործակցության ծախսերի հարցին, պետք է նշեմ, որ դա նորություն չի և մեր բյուջեի 2%-ն ուղղվում է երիտասարդական հիմնադրամին: Այս տարի այն կազմել է 90 մլն. դրամ, հաջորդ տարի բյուջեի մեծացմամբ պայմանավորված այդ թիվը նույնպես մեծացել է: Համահայկական հիմնադրամին մենք ամեն տարի հատկացնում ենք 4 մլն դրամ, որը մեր պարտքն է մեր հասարակության և մեր երկրի նկատմամբ: Ուզում եմ նաև հիշեցնել, որ երիտասարդական հիմնադրամին ուղղվող միջոցների 50%-ը վերադարձվում է համալսարանին այլևայլ միջոցառումների համար: Այլ բան է, որ այդ միջոցառումների համար մենք պետք է մշակենք և ներկայացնենք հստակ հիմնավորված ծրագրեր: Չի եղել մի դեպք, որ մենք ներկայացնենք հիմնավորված ծրագիր, որը չֆինանսավորվի:

Այդ գումարներից եղել են ինչպես գիտական գործուղումներ, երիտասարդական փոխանակումներ, այնպես էլ ուսման վարձի զեղչեր:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) – Վերջում ես կցանկանամ հարց ուղղել պարոն Սիմոնյանին հանրակացարանի հետ կապված: Ձեր կարծիքով ի՞նչ ծավալ պետք է ապահովվի այդ հանրակացարանը և դա՞ է համալսարանի հիմնական խնդիրը:

Ա. Սիմոնյան – Պարոն Նախագահ, մենք կցանկանայինք, որպեսզի հնարավորություն լիներ առնվազն 300 հոգու կեցության ապահովման համար: Դա իհարկե մեծ թիվ է, սակայն խիստ անհրաժեշտ: Առաջարկվող ծրագրերից մեկն էլ այն է, որպեսզի հյուրերի տունը փոխանակվի ավելի հետու տեղում գտնվող որևէ շենքի կամ շինարարության հետ: Սա ես համարում եմ ամենահիմնական և ամենաիրական ձևը: Կան նաև այլ միջոցներ, որոնք քննարկվել են և ըստ անհրաժեշտության կներկայացվեն: Մեր հետազոտությունները ցույց են տվել, որ այսօր էլ մենք հնարավորություն ունենք մինչև 500 ուսանող միջին և մերձավոր արևելքից, միջին Ասիայից, Ռուսաստանից և Վրաստանից մեզ մոտ ուսման ընդունելու և ցանկացողները շատ են հատկապես բնագիտական ուղղությամբ, եթե ապահովվի հանրակացարանով: Սա թույլ կտա ավելացնելու մեր միջոցները և այդ առումովսա համալսարանի գլխավոր խնդիրներից մեկն է:

խորհրդի նախագահը առաջարկեց գրանցվել ելույթների համար:

Գրանցվեցին՝ Յու. Վարդանյանը, Մ. Գրիգորյանը, Հ. Մուսայելյանը, Ն. Մարտիրոսյանը, Վ. Դումանյանը, Ռ. Ավագյանը, Հ. Դեմոյանը, Ռ. Քարամյանը, Հ. Սարգսյանը, Ա. Ավագյանը, Ուսանող 1, Ուսանող 2, Վ. Վարագյանը:

Յու. Վարդանյան – Մեծարգո նախագահ, հարգելի ռեկտոր, խորհրդի հարգելի անդամներ: Ռեկտորը բազմակողմանի ներկայացրեց անցած ժամանակահատվածում կատարված աշխատանքը, որին մենք պետք է գնահատական տանք: Այդ գնահատականը ամենից առաջ վերաբերվում է համալսարանի ղեկավարության աշխատանքին և ես առաջարկում եմ այդ աշխատանքները գնահատել բավարար: Կցանկանամ մի քանի խոսք ասել ռեկտորատի աշխատանքների մասին, ովքեր եղել են

այս ընթացքում ոչ միայն գործ հանձնարարող և հսկող, այլ նաև օգնող , որը ես շատ կարևորում եմ: Մեր ֆակուլտետի օրինակով կարող եմ ասել, որ այս տարի ռեկտորի հանձնարարությանմբ հինմովին վերանորոգվել և կահավորվել են մի ամբողջի բոլոր ուսումնական լաբորատորիաները, որտեղ մուտք է գործում առաջին կուրս եկած ուսանողը: Դրական գնահատելով ռեկտորատի աշխատանքը՝ ես հեռու եմ այն մտքից, որ չկան չլուծված հարցեր և խնդիրներ և հույս ունենալով, որ դրանցից որոշների լուծման հարցում Խորհուրդը կարող է օգնել, բարձրացնել լուծման հնարավոր երեք հիմնական հարցեր: Երկու տարի առաջ Խորհրդի նիստում իմ կողմից հարց բարձրացվեց բնագիտական ուսումնական լաբորատորիաները գիտական սարքավորումներով նորացնելու վերաբերյալ: Այդ հարցը լուծվեց, երեք տարի տևող ծրագիրն ավարտվում է այս տարի, որը սակայն կիսատ մնաց, քանի-որ վերաբերվում էր միայն բակալավրիատի ուսումնական լաբորատորիաներին և կցանկանայի խնդրել այդ ծրագիրը ընդլայնել նաև մագիստրոսական ուսուցման ուսումնական լաբորատորիաների համար: Երկրորդ և երրորդ հարցերը կապված են ուսանողության հետ: Այս տարվա ամենամեծ նվաճումը ամառվա ընդունելության գործընթացն է, քանի-որ այն մեղմացրեց անցած տարվա անկման հետևանքները: Ինձ՝ որպես ֆիզիկոսի, ուրախացնում է այն, որ երիտասարդների մոտ չի կորել հետաքրքրությունը բնագիտական գիտությունների նկատմամբ: Մեր ֆակուլտետի օրինակով կարող եմ ասել, որ ամենամեծ ընդունելությունը եղել է 125 ուսանող, իսկ այս տարի ընդունվել է 117 մարդ, որը փոքր է զիջում ամենամեծ թվին: Սակայն մեր ֆակուլտետը տղաների ֆակուլտետ է և երկրորդ կուրսում այդ 117-ից կտվորեն միայն 40-ը, մնացածը կզորակոչվեն բանակ: Ես ցանկանում եմ խնդրել, որ ապրիլ-մայիս ամիսների զորակոչը տեղափոխվեր քննություններից հետո, որպեսզի երիտասարդը հանձներ իր քննությունները և ապա դրանից հետո զորակոչվեր: Երրորդ հարցը վերաբերվում է երիտասարդ մասնագետներին աշխատանքով ապահովվելու խնդրին: Ազատ շուկայական հարաբերություններում Բուհը պատասխանատվություն չի կրում երիտասարդի զբաղվածության համար: Սակայն մեր համալսարանը ունի դրական փորձ իր շրջանավարտների զբաղվածության խնդրի լուծման, երբ մասնավոր ընկերություններն արդեն իսկ ուսման սկզբից պատրաստում են իրենց անհրաժեշտ մասնագետները, օրինակ՝ Սինոփսիս ընկերությունը: Դա երկկողմանի շահավետ

գործընթաց է: Ես առաջարկում եմ նման համագործակցություն սկսել Պաշտպանության նախարարության հետ, քանի-որ մեր շրջանավարտները իսկապես պիտանի կարող են լինել երկրի պաշտպանության ոլորտին՝ էլեկտրոնային սարքավորումների սպասարկման ոլորտում: Այս հարցը քննարկվել և դրական արձագանք է ստացել, սակայն վերջնական լուծում չի եղել: Կինդրեմ նաև այս հարցին հատկացնել ուշադրություն: Վերջում երկու խոսքով անդրադառնամ նախագահական սպասվող ընտրություններին և միանալ ռեկտորի ասածին՝ ավելացնելով միայն, որ Դուք՝ պարոն նախագահ, միշտ նշել եք մեր հիմնական խնդիրները և ցանկանում եմ ձեզ հաջողություն մաղթել խնդիրների լուծման հարցում:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) – Շնորհակալություն: Ինչ վերաբերվում է ուսումնական լաբորատորիաներին, ապա այդ ծրագիրը լինելու է մշտական և մենք ամեն տարի այդ ներդրումն ունենալու ենք: Ինքներդ որոշեք, թե որտեղ կծախսվեն այդ գումարները: Մյուս հարցերն առաջարկում եմ քննարկել պաշտպանության նախարարի հետ, երբ նա այցելի համալսարան: Ես կարծում եմ, որ երկու հարցերն էլ լուծելի և հնարավոր տարբերակներ են: Այստեղ կարող են ծնվել հավելյալ խնդիրներ, քանի-որ պաշտպանական համակարգերը սպասարկելու համար անհրաժեշտ են համապատասխան ուսումնական սարքավորումներ, որոնք շատ քիչ են: Ինչ վերաբերվում է երիտասարդության հետաքրքրությանը կրթության նկատմամբ, ապա ես համոզված եմ, որ այդ հետաքրքրությունը գնալով ավելանալու է: Մենք պետք է առաջնորդվենք արդյունքներով, որոնք փաստում են, որ 2012թ,-ին 16 հայ աշակերտներ մրցանակներ են ստացել միջազգային առարկայական օլիմպիադաներում: Դա ավելին է, ինչ ստացել են մեր տարածաշրջանի մյուս պետությունների միասին վերցրած: Սա խոսում է նրա մասին, որ կա ներուժ և հետաքրքրվածություն: Ինչպես նաև «Լույս» հիմնադրամը այս տարի մասնակի հոգացել է աշխարհի լավագույն 10 Բուհ ընդունված 120-ից ավել հայ երիտասարդների ծախսերը: Մենք պետք է կարողանանք մեր աշխատանքների թափն ավելացնել և չհպարտանալ նրանով, որ տարածաշրջանի լավագույն բուհն ենք, այլ երբ գոնե կկարողանանք մտնել աշխարհի 500 լավագույն բուհերի ցանկ, արդեն կխոսենք, որ ինչ-որ լուրջ արդյունքների ենք հասել: Դա առաջին հերթին պայմանավորված է դասախոսական աշխատանքով և այստեղ ուսանողներից քիչ բան է կախված:

Մ. Գրիգորյան – Մեծարգո Նախագահ, հարգելի ռեկտոր, խորհրդի հարգելի անդամներ, մենք լսեցինք պարոն Սիմոնյանի հաշվետվությունը: Կատարվել է մեծ ծավալի աշխատանք և ես կառաջարկեի աշխատանքները գնահատել բավարար; Միևնույն ժամանակ կցանկանամ նշել, որ մենք ունենք բավական չլուծված խնդիրներ, որոնք կախված են մեզնից՝ հատկապես, ելնելով մեր ֆակուլտետի օրինակից, նշեմ, որ ինձ չի բավարարում, որ մեր ոչ բոլոր շրջանավարտներն են մրցունակ աշխատանքային շուկայում: Շրջանավարտների մի մասը ավարտում է բավարար գիտելիքներով, սակայն մրցունակ չի շուկայում և ես կարծում եմ, որ առաջին հերթին պետք է մտածենք այս մասին: Այսօր բավականին ուժեղ պայքար է գնում տարբեր բուհերի միջև և այդ տեսակետից, ի ուրախություն մեզ, համալսարանը հաղթող է դուրս գալիս՝ հատկապես դիմորդների հավաքագրման գործում: Ելնելով վերլուծությունից, ես նկատում եմ, որ ֆինանսական վիճակի հետ կապված, մենք կարող ենք հայտնվել ոչ շահեկան վիճակում: Այսօր համալսարանի ֆինանսական վիճակը ցույց տվեց, որ կարող ենք ավելացնել աշխատավարձը ներքին ռեսուրսների հաշվին, սակայն սա այն առավելագույն սահմանն է, որից անցնել չենք կարող: Մենք դեմ ենք բյուջեի 80 կամ 90 տոկոսը տալ աշխատավարձին, որը կլինի կազմակերպության փլուզումը և լճացումը: Ես համալսարանի ֆինանսական հոսքերի ավելացումը տեսնում եմ երկու ճանապարհով, որոնք կլինեն կայուն. Առաջինը պետական բյուջեից կրթության և գիտության ֆինանսավորման ծավալների ավելացումն է և մասնակցությունների գծով վարձավճարների ավելացումն է: Համալսարանը միակ բուհն է, որտեղ պատրաստվում են մեծ թվով բնագետներ: Վերլուծելով, թե ինչքան է արժենում մեկ ֆիսիկոսի կամ երկրաբանի պատրաստումը, գալիս ես այն եզրակացության, որ մոտավորապես մենք մեկ տարվա համար ծախսում ենք ավել 400 հազար դրամ: Այդ բացը լրացվում է հասարակագիտական մասնագետների պատրաստման հաշվին, սակայն այս ուղղությամբ պետք է որոշակի քայլեր կատարվեն: Ես կհայտնեմ նաև իմ գործընկերների կարծիքը և կնշեմ, որ վերլուծելով այն մեծ աշխատանքը, որը տարել է այս տարիներին մեծարգո Նախագահը երկրի հզորությունը մեծացնելու, միջազգային ասպարեզում վարկանիշը բարձրացնելու ուղղությամբ, հանդուրժողականության գաղափարը զարգացնելու համար, մենք՝ համալսարանականներս, հասկացել ենք, որ կլինենք Ձեր աջակիցը առաջիկա ընտրություններում և ակտիվ համախոհը:

ցանկանում են նաև շնորհավորել բոլորիս Ամանորի և Սուրբ ծննդյան կապակցությամբ:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) – Շնորհակալ եմ: Ես կիսում եմ Ձեր կարծիքը, որ ցանկացած հաստատության ֆինանսական ծրագրերում աշխատավարձը չի կարող այդչափ գերիշխող լինել, այլապես հիմնարկից վերածվում ես սոցիալական ֆոնդի: Դա բերում է նրան, որ մի քանի տարի հետո չեն լինի նաև սնուցման աղբյուրները: Ես հասկանում եմ բոլորի հոգսը և ցանկանում եմ, որպեսզի աշխատողները բարձր աշխատավարձ ստանան, սակայն դա հնարավոր է միայն զարգացման ճանապարհով:

Հ. Մուսայեյան – Մեծարգո նախագահ, խորհրդի հարգարժան անդամներ: Մեր ընկերությունը համագործակցում է աշխարհի շուրջ 1300 համալսարանների հետ, սակայն միայն Հայաստանում է, որ բուհերի հետ համագործակցությամբ կադրեր ենք պատրաստում ընկերությունում աշխատելու համար: Համագործակցությունը ԵՊՀ-ի հետ ունի արդեն 7 տարվա պատմություն, այժմ ունենք 40 ուսանողներ, առաջին շրջանավարտները տվել ենք 2010թվականին և գոհ ենք մեր համագործակցության մակարդակից: Ցանկացած բուհի համար ամենամեծ ցուցանիշը, նա է, թե բուհն ավարտելուց հետո քանի շրջանավարտ է աշխատաշուկայում իր մասնագիտությամբ աշխատանք գտնում և մենք ունենք 100 տոկոսանոց արդյունք: Մեր 32 շրջանավարտներից 32-ն էլ աշխատում են այժմ մեր ընկերությունում: Առիթից օգտվելով ուզում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել և Ռադիկ Մարտիրոսյանին և Յուրի Վարդանյանին և բոլոր այն մարդկանց, ովքեր այս հաջողված համագործակցությունը դարձրեցին իրականություն: Եվ քանի-որ Ռադիոֆիզիկայի ֆակուլտետը մեր համագործակից հիմնական ֆակուլտետն է և դեկանը օրինակ բերեց, որ ֆակուլտետի միայն 10 տոկոսն են աղջիկներ, նաև ես առիթ եմ ունեցել զեկուցելու, որ SS ոլորտում այդպիսի միջազգային ցուցանիշ կա, որ 10 տոկոսն են կանայք, իսկ հայաստանում դա 35-40 տոկոս է կազմում: Այսօր էլ մեր ընկերությունում աշխատողների մոտ 40 տոկոսը կանայք են: Եվ քանի-որ այդքան սովորող աղջիկներ ունենք, ապա մեր երկրի ապագան էլ լուսավոր է: Ես կցանկանայի, պարոն Նախագահ, որ ձեր վերընտրվելուց հետո առաջիկա հինգ տարիներին մենք բոլորս

երկրի ապագայի առումով ամեն մեկս իր տեղում անենք մեր աշխատանքը: Միայն այս դեպքում մենք կարող ենք արձանագրել հաջողություններ:

Ն. Մարտիրոսյան – Մեծարգո նախագահ, հարգարժան ռեկտոր, խորհրդի հարգելի անդամներ, երկու տարի առաջ ես այս նույն ամբիոնից բարձրացրեցի 7-րդ մասնաշենքի հիմնանորոգման խնդիրը և այսօր այս նույն ամբիոնից ասում եմ, որ 7-րդ մասնաշենքը իր նորոգմամբ և կահավորմամբ այլևս հիմնովին պատրաստ է դասապրոցեսին: Սակայն մեր մասնաշենքում մենք ունենք ուսումնական գործընթացը անվտանգ ապահովելու խնդիր: Շատ անգամներ մեր անվտանգության աշխատակիցները իրենց ուժերով չեն կարողանում ապահովել բազմաթիվ աղջիկներով լի մասնաշենքի անվտանգությունը կողմնակի մարդկանցից: Ես կցանկանայի խնդրել օրվա որոշակի ժամերի համալսարանի տարածք մուտքը կողմնակի մարդկանց արգելելու հնարավորություն ստեղծել, գուցե դա կարող է լինել որոշակի ցանկապատման միջոցով: Շնորհակալություն:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) – Ես չեմ կարծում, որ համալսարանի տարածքի ցանկապատումը անհիմաստ է և կարելի է միայն սահմանափակել մուտքը մասնաշենքեր: Կարելի է ներմուծել որոշակի նոր տեխնիկական միջոցներ, որպեսզի ուսանողը կարողանա իր ուսանողական տոմսով մուտք գործի: Իհարկե աշխատատեղը պետք է լինի մաքուր և կոկիկ, որը միմիայն նպաստում է ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Վ. Դումանյան – Մեծարգո նախագահ, խորհրդի հարգարժան անդամներ: Ես ինքս ներկայացնում եմ այստեղ մեր ֆակուլտետի կոլեկտիվը և պարտավոր եմ բարձրաձայնել մտքեր, որոնք հնչում են մեր կոլեկտիվում, որոնք խնդրային են: Կարծում եմ նաև արդյունավետ կլիներ այս խորհրդի նիստն էլ արժեր ցուցադրել ներքին ցանցում, որպեսզի կոլեկտիվը տեղյակ լիներ, որ իր խնդիրները բարձրացվում են: Ես առաջարկում եմ ռեկտորի աշխատանքը գնահատել բավարար և միանշանակ է, որ ռեկտորը իր ուժերին ներաժին չափով աշխատել է: Սակայն պետք է նշեմ, որ մեր հնարավորությունները խիստ սահմանափակ են լուծելու առկա խնդիրները: Մենք էապես զիջում ենք այլ պետական բուհերին աշխատավարձի մասով: Այս խնդիրը քննարկվեց նաև գիտական խորհրդում և ընդունվեց որոշում, որ հաշվի առնելով ԵՊՀ աշխատակիցների աշխատավարձի ցածր լինելը և ԵՊՀ բյուջեի խիստ սահմանափակ

հնարավորությունը, ակնկալվող լուծում տալու համար՝ միջնորդել ԵՊՀ Խորհրդին սահմանված կարգով դիմել ՀՀ Կառավարությանը ԵՊՀ-ին լրացուցիչ ֆինանսական միջոցներ տրամադրելու խնդրանքով: Պատճառները մի քանիսն են և դրանցից հիմնականը այն է, որ համալսարանը Կրթության մասին օրենքով ունի հատուկ կարգավիճակ և որպեսզի մեր աշխատավարձերը գոնե հավասար լինեն այլ բուհերում վճարվող աշխատավարձերին: Ինչ վերաբերվում է մեր ուսանողների մասնակցությանը միջազգային օլիմպիադաների, ապա ես կարող եմ նշել, որ այդ տաղանդավորները հիմնականում տեղափոխվում են արևմուտք և շարունակում այնտեղ ուսումը և համարյա ոչ ոք չի վերադառնում և մենք ունենք կադրերի ծերացման խնդիր, որը ևս հանգում է աշխատավարձի խնդրին:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) – Մենք պետք է աշխատենք խուսափել ծայրահեղություններից, սակայն ակնհայտ է, որ մեզնից յուրաքանչյուրը պետք է շահագրգռված լինի աշխատավարձի բարձրացմամբ: Չնայած դրան ես չեմ կարծում, որ արտասահմանում աշխատավարձի արդյունքում տնօրինվող գումարները ավելի բարձր են, քան մեզ մոտ: Ես չեմ կարծում, որ այսօր քիչ կամ ցածր աշխատավարձով է բավարարվում լավ մասնագետը, այսօր մեր խնդիրն է լավ մասնագետ գտնելը, սակայն այդպիսիք չկան պետական նույնիսկ բարձր պաշտոնների համար: Հայաստանում ոչ ոք չի կարող նշել մեկին, որ ունենա միջին ունակություններից բարձր կարողություններ և անգործ մնա: Ի դեպ ռեկտորի աշխատավարձը հունվարի 1-ից հավասարվում է իմ աշխատավարձին: Հանրապետությունում միջին աշխատավարձը 120 հազար դրամ է, պետական համալսարանում արդեն հասնում է 160 հազարի: Կարելի է համեմատել Սովետական միության թվերի հետ և տեսնել, որ մոտենում ենք գրեթե այդ թվերին և որոշ ժամանակ անց այդ խնդիրները կլուծվեն: Որևէ մեկը չի կարող որոշել և բարձրացնել որոշ կատեգորիայի մարդկանց աշխատավարձը:

Ռ. Ավագյան – Երևի ճիշտ է, որ տնտեսագիտական համալսարանում աշխատավարձերն ավելի բարձր են, քան մեզ մոտ, սակայն Տնտեսագիտական համալսարանը չունի մեծ բնագիտական թև: Այսօր բնագիտական թևում ուսման վարձերը անհամեմատ ավելի վաճր են, իսկ ծախսերը՝ բարձր: Սակայն այն վիճակը, որ մենք ապրում ենք հումանիտար մասնագիտությունների հաշվին, ինձ չի բավարարում: Մենք կատարել ենք համապատասխան հաշվարկ և մեր հիմնավորված

ծախսերը շատ ավելի մեծ են՝ պայմանավորված խմբերում քիչ ուսանողների քանակով, լաբորատոր սարքավորումներով: Առանց այդ ծախսերի մենք կվերածվենք սովորական գավառական համալսարանի:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) – Ճիշտ կլիներ նաև, որ նշեիք, որ հումանիտարները դրամաշնորհներ ստանալու ավելի քիչ հնարավորություններ ունեն, քան բնագետները և եթե դասախոսը պատրաստված է և հեղինակություն ունի, ապա հնարավոր է գիտության զարգացման համար ներգրավվել հավելյալ միջոցներ: Իսկ ամբողջ աշխարհում գիտությունը կատարվում է բուհերում: Թուրքմենստանի նախագահը իր այցի ժամանակ նշեց, որ 10 միլիոն դրամի ծախսման խնդիր ունեն և դրանք կարելի է բերել համալսարան: Ես նաև համոզված եմ, որ բնագիտական մասնագիտությունների հանդեպ հետաքրքրությունը գնալով մեծանում է և մի քանի տարի հետո մենք ստիպված ենք լինելու որոշ հումանիտար մասնագիտությունների գծով պետական խրախուսման միջոցներ մտածել:

Հ. Դեմոյան – Մեծարգո պարոն նախագահ, հարգելի գործընկերներ, ես ցանկանում եմ խոսել մի խնդրի մասին՝ կապված մոտակա տարիներին մեր գիտական կադրերի նախապատրաստման հետ: Գաղտնիք չէ, որ 3 տարի հետո մենք պատրաստվում ենք նշելու Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցը և այս առումով խնդիր ունենք հատկապես երիտասարդ կադրերին, համալսարանականներին դեպի այս թեման ուղղորդելը: Անհրաժեշտություն է առաջացել հումանիտար ֆակուլտետներից մեկում բացել Ցեղասպանագիտության ամբիոն և ունենք բանավոր համաձայնություն ռեկտորի հետ, շուտով կխոսենք նաև այլ ձևաչափով համագործակցության մասին և տեղեկացնելու համար ասեմ, որ վերջին երեք տարվա ընթացքում մենք կարողացանք փոքրիկ դրամաշնորհների միջոցով բերել արտասահմանյան ասպիրանտների Հայաստան: Միացյալ նահանգներում այդպիսի ամբիոններ հիմնականում հայկական դրամագլուխներով են բացվում, սակայն ամբիոնների վարիչները հիմնականում օտարազգիներ են և հայտերի կեսից ավելին տրվում են թուրքերի կողմից, որը վտանգավոր միտում է: Եվ այս նախաձեռնությունը խիստ հրատապ է, առավել ևս ողջ տարածաշրջանում համանման ամբիոն չկա:

Ռ. Քարամյան – Մեծարգո պարոն նախագահ, պարոն ռեկտոր, խորհրդի հարգելի անդամներ.

Պատիվ ունեմ որպես համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ առաջին անգամ ելույթ ունենալ խորհրդի նիստում: Այս հանգամանքը որքան պատվաբեր է, այդքան էլ՝ պատասխանատու: Հաշվետվությունում մանրամասն ներկայացված են համալսարանի ուսանողական կյանքում տեղի ունեցած զարգացումներն ու իրադարձությունները: Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ տարին բարդ էր ուսանողական խորհրդի համար: Բարդ այն իմաստով, որ տեղի ունեցավ սերնդափոխություն: Պաշտպանելով թեկնածուական ատենախոսությունը՝ համալսարանում իր ուսումնառությունն ավարտեց Ուսանողական խորհրդի նախագահ Յուլակ Ակոպյանը, փոխվեցին Ուսանողական խորհրդի նախագահության բազմաթիվ անդամներ: Այդուհանդերձ, պետք է նշել, որ ուսանողական խորհուրդը կատարել է իր առջև դրված խնդիրները:

Նախորդ տարիների համեմատ՝ փորձել ենք առավել ակտիվ ներգրավված լինել կրթական բարեփոխումներում, ուսանողներին մանրամասն ներկայացնել Բոլոնիայի գործընթացը, նախկին համակարգից նորին անցնելու հետ կապված խնդիրներն ու դրանց նրբությունները: Հաշվետու ժամանակաշրջանը մեզ համար կարևոր է եղել հատկապես ռազմահայրենասիրական բնույթի միջոցառումների քանակի ավելացմամբ: Մենք քաջ գիտակցում ենք, որ Ադրբեջանի հետ ունեցած չկարգավորված հակամարտությունը ամեն պահ կարող է մեր հայրենիքի դեմ ուղղված նոր ռազմական արկածախնդրության վերածվել, ուստի մենք շարունակելու ենք ռազմահայրենասիրական միջոցառումների շարքը, առավել ակտիվ ենք աշխատելու Հայաստան-Արցախ երիտասարդական-ուսանողական կապերի խորացման, բանակ-ուսանողական կազմակերպություններ հարաբերությունների զարգացման ուղղություններով:

Բազմիցս խոսվել է, որ մեր երկիրը, հարուստ չլինելով համաշխարհային շուկաներում մեծ պահանջարկ վայելող էներգակիրներով և նմանատիպ այլ օգտակար հանածոներով, պետք է գիտելիքահեն տնտեսություն ունենա: Այս առումով, մեծ է ուսանողության՝ որպես ապագա Հայաստանի մասնագետների դերակատարությունը: Զարգացած և ապահով Հայաստանը մենք պետք է այսօր կառուցենք՝ լավ սովորելու, հնարավորինս շատ գիտելիքներ կուտակելու և մասնագիտական ունակություններ ձեռք բերելու ճանապարհով: Մենք նաև գիտակցում ենք, որ ուսանողական

կառույցները բարեփոխման և իրենց գործունեության վերանայման, գործառույթների առաջնայնության նորովի ընկալման խնդիրներ ունեն: Այսուհետ, մեր առաջնային նպատակն ու գործառույթն ենք համարում բարձրորակ ու մրցունակ կրթություն ստանալու և ազգային-հայրենասիրական ու նորարարական գործունեություն ծավալելու ցանկացություն ունեցող ուսանողի համար առավելագույնս բարենպաստ պայմանների ստեղծումը, խթանիչ միջոցառումների կազմակերպումն ու այս գաղափարների տարածումը:

Արագ փոփոխվող աշխարհն իր հետ բազմաթիվ մարտահրավերներ է առաջ բերում և տեխնոլոգիական դարաշրջանը մեզ ստիպում է վերանայել մեր կառույցի գործունեության ոչ միայն իրավակազմակերպչական, այլ նաև՝ գաղափարական հիմքերը: Որպես ամենամեծ ուսանողական համայնքի ինքնակառավարման մարմին՝ Երևանի պետական համալսարանի Ուսանողական խորհուրդն իր առջև հավակնոտ նպատակ է դրել՝ մեկ տարվա ընթացքում մշակել և հաջորդ խորհրդի նիստին Ձեր դատին ներկայացնել «Ուսանողական ինքնակառավարման զարգացման» ռազմավարությունը, որը հնարավորություն կընձեռնի շարունակական աշխատանքների և արդյունավետ սերնդափոխության համատեքստում ապահովել հայ ուսանողի գիտակրթական, հոգևոր-մշակութային և գաղափարապես կայուն տեղը ժամանակակից աշխարհում: Մեծարգո պարոն նախագահ, ուսանողական խորհրդի անունից ցանկանում եմ ասել, որ մենք չափազանց կարևոր ենք համարում Ձեր առաջ քաշած գաղափարների իրականացումը և որպես ապագա մասնագետներ այսօրվանից պատրաստակամություն ենք հայտնում լծվելու ապահով Հայաստան տեսնելու տեսլականի իրականացման գործին: Շնորհակալություն:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) – Երկու նկատառում միայն: Դու միշտ խոսելով էներգակիրների մասին, միշտ ասա դեռևս: Դեռևս չունենք նման ռեսուրս և սա լիովին լուրջ եմ ասում, քանի որ այդ ուղղությամբ լրջագույն աշխատանքներ են տարվում, սակայն, իսկապես, մենք պետք է ունենանք գիտելիքահենք տնտեսություն և առաջ ենք գնում այդ ուղղությամբ: Օրինակ, ամեն տարի SS ոլորտը ամեն տարի զարգանում է 15-20%-ի չափով: Ինչ վերաբերվում է ուսխորհրդի աշխատանքները բարեփոխելուն, ապա մենք պատրաստ ենք քննարկելու այդ ճանապարհները տարբեր մակարդակներում:

Հ. Սարգսյան – Մեծարգո նախագահ, խորհրդի հարգելի անդամներ, միանում եմ իմ գործընկերներին և ռեկտորի գործունեությունը գնահատում եմ բավարար: Կարծում եմ, որ մենք այս դահլիճում պետք է խոսենք ոչ միայն համալսարանի այլ ամբողջ կրթահամակարգի խնդիրների մասին: Կարծում եմ, որ մենք պետք է շեշտադրենք որակյալ մարդկային կապիտալի ստեղծումը: Այսօր կրթահամակարգը վերածվում է առաջընթացը կաշկանդող գործոնի: Ես պետք է խոսեմ մի մտահոգության մասին, որը պայմանավորված է կայուն առաջընթացի հիմնախնդրով: Արդյոք կարող է մեր կրթական համակարգը մեկ ուսանողի համար ծախսվող շուրջ հազար ամերիկյան դոլարով ապահովել միջազգային կրթական մակարդակ: Ես կարծում եմ, որ այստեղ մենք անպայման ունենք դժվարություններ և կարող ենք հայտնվել աղքատության ծուղակում: Ստեղծվել է մի իրավիճակ, երբ մի կողմից իրատեսական չէ վարձավճարների բարձրացումը և ճիշտ կլինի սահմանել վերին շեմ, ինչպես մի անգամ նշել է պարոն նախարարը, մյուս կողմից էլ էժան կրթությունը չի կարող նպաստել աղքատության շեմի բարձրացմանը: Մեր կարշիքով պետք է վերանայվի ոչ թանկարժեք կրթության քաղաքականությունը և ես որպես տնտեսագետ կարող եմ ասել, որ այն կազմակերպությունները, որոնք իրենց ծառայությունները մատուցում են գնագոյացումից ցածր արժեքով, ի վերջո սնանկանում են: Այսօր միայն մասնագետների մասնագիտական պատրաստավածությունն է, որ թույլ է տալիս որոշակի մակարդակ ապահովել, սակայն արդեն իսկ մեր թողարկած մասնագետները վաղվա օրվա ժամանակ մրցունակ չեն լինի: Արդիական է նաև սովորողների ռեեստրի ստեղծումը և որոշակ պայմանագրային հարաբերությունների ներմուծումը: Այսպիսով առաջարկում եմ՝ լրջորեն զբաղվել կրթության միջազգայնացման հարցով, հրավիրել պահանջված մասնագետների և վերապատրաստել մեր դասախոսներին հայտնի կենտրոններում: Երկրորդ խնդիրը պետք է ունենա պետական կարգավորման բաղադրիչ և պետք է կրթությունը սնուցել ոչ միայն բյուջետային աղբյուրներից, այլև ամենատարբեր բարեգործական հաստատություններից՝ պետության կողմից դեպի կրթություն դրամական միջոցների մուտքի խրախուսման միջոցով: Շնորհակալություն:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) – Պարոն Սարգսյան, բարեգործությունը չի կարելի շփոթել ռեկետի հետ: Բարեգործները իրենք պետք է ցանկանան ներդրում կատարել և ի վերջո իրենք են որոշում, թե որ ոլորտում: Մենք այսօր էլ ամեն մի

հնարավոր առիթով աշխատում ենք կրթությանը և գիտությանը աջակցել: Իհարկե դա քիչ է և միշտ քիչ է լինելու, քանի-որ օրինակ ամենաշատը փողի պակասության մասին ահազանգում է Միացյալ Նահանգները: Ֆինանսավորման ավելացման պահանջարկ միշտ էլ լինելու է և դա է երևի հենց զարգացման խթանը:

Ա. Ավագյան – Այս տարի լրացավ Եղիշե Չարենցի ծննդյան 115 ամյակը, գրական մութքի 75 ամյակը; Շատերը Եղիշե Չարենցի գերեզմանի հետ կապված ունեն դժգոհություններ և մենք իսկապես տեղնում ենք հնարավորություն նրա գերեզմանի տեղը գտնելու, եթե դրան ցուցաբերվի պետական մոտեցում՝ ներառելով նաև տարբեր արխիվներին թույլատվությամբ: Ձեզ դիմում եմ նաև որպես բանասերի, որպեսզի որևէ բան նախաձեռնվի, որ այս պարտիզանական հետազոտությունները բարձրացվեն պետական մակարդակի:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) – Մենք իհարկե կփորձենք, սակայն չեմ կարծում, որ դրանից Չարենցի դերն ու նշանակությունը կփոխվի: ակնհայտ է, որ մեզնից յուրաքանչյուրը իր նախնյաց հիշողությունները, իր գերեզմանները պետք է պահի, բայց Չարենցի պարագայում այդ մտավախությունը չկա: Սա իհարկե չի նշանակում, որ փնտրել պետք չի: Այդպիսի բազմաթիվ փորձեր են եղել և ևս մեկ անգամ կարող ենք փորձել:

Վարդան Ղափլանյան - Մեծարգո պարոն նախագահ, մեզ՝ ուսանողներիս համար համալսարանական ամենակարևոր ենթակառուցվածքներից են գրադարանն ու սպորտային համալիրը: Ես կցանկանայի հարց բարձրացնել սպորտային համալիրի մասին, որը գտնվում է մեղմ ասած ոչ պատշաճ վիճակում՝ հատկապես ֆուտբոլային դաշտը: Եվ մենք ֆուտբոլային մրցաշարեր անցկացնելիս հաճախ ստիպված ենք լինում վերանորոգման միջոցներ նախատեսված չեն, ապա երևի կարելի է մտածել ֆինանսավորման այլընտրանքային միջոցների մասին՝ մասնավորապես ուղիներից մեկն է ներգրավել մասնավոր անձանց, ովքեր կհամաձայնեն վերանորոգել և որոշ ժամանակ տնօրինել այդ դահլիճը: Մենք հույս ենք հայտնում, որ այդ հարցը իր լուծումը կստանա:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) – Ընդհանուր գաղափարին կողմ եմ, բայց ես դեմ եմ, որ որևէ մեկը վերանորոգի և սկսի օգտագործել դահլիճը: Ես չեմ կարծում,

որ մարզադահլիճի վերանորոգումը այնքան մեծ խնդիր է, որ մենք չենք կարող ինքներս իրականացնել: Առաջարկում եմ ուսումնասիրել խնդիրը, կազմել նախահաշիվ և որոշում կայացնել:

Արմեն Խաչիկյան - Մեծարգո պարոն նախագահ, խորհրդի հարգարժան անդամներ, հարգելի ռեկտոր, իմ հարցը ավելի շատ կազմակերպչական բնույթ ունի, սակայն ուսանողական խորհրդի համար շատ կարևոր նշանակություն ունի: Խոսքը գնում է գնումների մասին օրենքին և ուսանողական խորհրդի աշխատանքները երբեմն լինում են չպլանավորված, երբեմն լինում են հանկարծակի նախաձեռնություններ, որոնց համար դժվար է նախօրոք ունենալ պլանավորում և գծել տարեկան պլան: Առաջարկում եմ դիմել Կառավարությանը որպեսզի թույլատրեն ուսանողական խորհրդի ծախսերը կատարելու մեկ անձից գնման ընթացակարգով:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) – Շատ լավ, սակայն մեր գնումների մասին օրենքը հենց դա էլ կանոնակարգում է: Գնումները լինում են ինչպես մրցութային կարգով, այնպես էլ մեկ աղբյուրից և երբեք որևէ մեկը դա չի արգելում: Բայց մեկ աղբյուրից գնումներն էլ ունեն իրենց ընթացակարգը՝ այսինքն պետք է ուսումնասիրվի շուկան, պատրաստվի որոշակի փաստաթուղթ: Հակառակ պարագայում մենք չենք կարող ըստ անհրաժեշտության վերահսկողություն իրականացնել: Սակայն և ուսխորհրդում և մյուս տեղերում միշտ պետք է լինի ծրագիր: Մեզնից յուրաքանչյուրը նաև պետք է հաջորդ տարվա համար ծրագիր ունենա՝ այդ թվում նաև ուսանողական խորհրդին և այդ ծրագրերի շարքում կարող են լինել նաև չնախատեսված ծրագրեր, որի տակ այդ ծախսերը կարող են կատարվել: Եթե այդ ծախսերը կատարվեն բարեխղճությամբ, որևէ մի վերահսկիչ ձեզ ոչինչ չի ասի: Կարևորը այն է, որպեսզի բոլորս սովորենք կարգով աշխատել:

Վ. Վարազյան – Պարոն նախագահ, կցանկանայի բարձրաձայնել երկու հարց: Արդեն երկու տարի է գործում են սոց. փաթեթները պետական համակարգի աշխատակիցների համար, սակայն բուհերը դուրս են մնացել այդ համակարգից: Խնդրանք-առաջարկ, որպեսզի համալսարանը նույնպես ներառվի այդ համակարգում, որը կթեթևացնի ևս մեկ բեռ համալսարանի պրոֆեսորադասախոսական աշխատակազմի հոգսերից: Մյուս հարցը վերաբերում է նրան, որ մեր երկիրը գտնվում է «Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» կարգավիճակում և ցանկացած պահի կարող է

պատերազմ սկսվել և երիտասարդ գիտությունների թեկնածուները, ովքեր պաշտպանել են և աշխատում են, որևէ պատրաստություն չեն անցել բանակում և հարց է ծագում, թե մենք ինչով պետք է զբաղվենք: Գուցե կարելի է սկսել մի ծրագիր, որպեսզի սկզբում կամավորության սկզբունքով, ապա գուցե և պարտադիր կարգով իրականացվեն հիշյալ խմբի զիվնորական պատրաստվածության դասեր: Շնորհակալ եմ:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) – Այս ուղղությամբ իհարկե կարելի է մտածել, սակայն դուք վստահ եղեք, որ Աստավծ մի արասցե, պատերազմ սկսվի բոլորի տեղը բանակում անպայման կգտնվի: Ինչ վերաբերվում է սոց. փաթեթներին ապա չեմ կարող խոստանալ, որ այդ հարցը հունվարի 1-ից կլուծվի, քանի-որ պահանջվում են հաշվարկներ: Հունվարի 1-ից սկսում ենք Գիտությունների ազգային ակադեմիայի աշխատակիցների ծրագիրը, որը բավական մեծ կատեգորիա է: Դեռևս չենք անդրադարձել համալսարանականներին, քանի-որ այստեղ ավելի բարձր աշխատավարձ են ստանում, քան գիտական աշխատողները: Սակայն եթե հաշվարկները ցույց տան, որ դա մեզ համար տանելի բեռ է, ապա նաև կընդգրկենք ողջ բուհական համակարգը, քանի-որ տարաբաժանում կատարելը բուհերի միջև ճիշտ ճանապարհ չէ:

Եթե այլ առաջարկություններ և ելույթներ չկան, ապա առաջարկում եմ հաստատել առաջարկված նախագծերը առանձին առանձին՝ համապատասխան առաջարկությունների հաշվառմամբ: Այն է.

1. Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի 2012 թվականի (հունվար-նոյեմբեր) եկամուտների և ծախսերի վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:
2. Երևանի պետական համալսարանի 2012 թվականի եկամուտների և ծախսերի հաշվետվության գնահատումը կատարել հաշվեքննության արդյունքների հիման վրա:

Կողմ՝ 68, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Առաջարկում եմ քվեարկել որոշման մյուս նախագծի հաստատման համար.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի 2013 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը (բյուջե)՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Երևանի պետական համալսարանի ռեկտորին 2013 թվականի ծախսերը կատարել Երևանի պետական համալսարանի 2013 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվին համապատասխան:

Կողմ՝ 68, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ) – Օրակարգի չորրորդ հարցը ընթացիկ հարցերն են: Ո՞ւնեք առաջարկություններ կամ հարցեր: Եթե չկան, առաջարկում եմ ավարտել նիստը, շնորհակալություն եմ հայտնում ձեզ, ցանկանում եմ օգտվել այս առիթից և շնորհավորել բոլորիդ Ամանորի կապակցությամբ, ցանկանալ ձեզ և ձեր ընտանիքներին խաղաղություն:

Խորհրդի նախագահ՝

Ս. Սարգսյան

Քարտուղար՝

Դ. Հայրապետյան

21.12.2012թ.